

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔ
ՍՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

# ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ

## ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԹՈՒՐՔԻՈ

ՍՏԱՄԲՈՒԼ

Անխառն հրճվանքով և եղբայրական սիրով կշնորհավորենք Ձեր ընտրությունը և գահակալությունը իբրև Պատրիարք Թուրքիո հայոց:

Ս. Լուսավորչի անմար կանթեղի առաջ կաղոթենք, որ Տերը Ձեզի երկար տարիներ պարգևե և Ձեզի ըլլա միշտ օգնական, որպեսզի Ձեր պատմական Աթոռին վրա բազմած, խաղաղությամբ և քաղցրությամբ հովվեք Ձեր աստվածասեր պատվական ժողովուրդը:

Այս ուրախ առիթով Ձեզի կշնորհենք արքության պատիվ, մաղթելով, որ զայն կրեք արևշատ օրերով, երջանիկ հովվապետությամբ:

Ս. Էջմիածնեն ողջո՜ւյն և օրհնությո՜ւն Ձերդ Ամենապատվության, հոգևոր դասուն, Եկեղեցական վարչությանց և միություններուն և համայն Մեր հավատացյալ զավակներուն:

Ջերմ սրտով կաղոթենք նաև առ Աստված Ձեր բարեխնամ երկրին և Ձեր աթոռանիստ մեծ քաղաքին բարօրության և խաղաղ ծաղկումին համար:

Կհաջորդե Մեր կոնդակը:

«ՍԻՐՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՇՆՈՐՀՔ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՂԻՑԻՆ ԸՆԴ ՁԵԶ»:

Ամեն:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

27 դեկտեմբեր 1961
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

---

## ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Պետական գործողությունք ավարտեցան:
Պատրիարքի գահակալությունը հունվար 3-ին:

Որդիական ակնածանքով՝
ԱՐԱՄ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ
ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ

25 դեկտեմբեր 1961
ՍՏԱՄԲՈՒԼ